

ՆԵՐՍԵՍ ՄՈՆԱՑԻ, ԲԱՆԱՍԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ, սոցիալապատկանությամբ՝
Ա. Գ. Գոլուխանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 208 էջ,
գինը՝ 1 ո. 30 կ.

Թեև հայ գրականության պատմության և բանասիրության մեջ նոր անուն չէ ուշ միջնադարի՝ XVI դարի վերջին և XVII դարի առաջին բառորդի եկեղեցական գործիչ, մանկավարժ և բանաստեղծ Ներսես Մոկացին, սակայն մինչև այժմ նրա կյանքը և գործը չէր արժանացել մենագրական հատուկ ուսումնասիրության։ Այդ բացը լրացնելու է գալիս երիտասարդ բանասեր Ալեքսանդր Գոլուխանյանի վերջերս հրատարակած «Ներսես Մոկացի» գիրքը, որ առաջին անգամ քննական-համեմատական բնագրերով ներկայացված է Մոկացուց մեզ հասած բոլոր գործերը՝ համապատասխան ծանոթագրություններով և նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ամփոփ ուսումնասիրությամբ։

Մոկացու կենսագրությունը Գոլուխանյանը տալիս է նրա ապրած դարաշրջանի հասարակական, բաղադրական ու կրթա-լուսավորական պայմանների սեղմ բնութագրմամբ, խաչաբեկվող պատուհանների ու աղետների մի ծանր ժամանակաշրջան, որի հետևանքներից մեկն էլ հայ մշակույթի ու գրականության խիստ անկումն էր։ Հայերը, ինչպես գրել է Մ. Աբեղյանը, «կամ պետք է ոչնչանային և վայրենանալով ընկնեին, և կամ, եթե ազգի մեջ կենսունակության դեռ ուժ կար՝ մեծ ջանքերով նորից ձգտեին կենդանության»¹։ Այդ ուժը կար, և դարի լավագույն զավակները՝ կյանքի կանչին ու պահանջին ունկնդիր, իրենց ջանքերը կենտրոնացրին նորոգելու և վերածնելու հայ կյանքին ու գրականությանը։ Մոկացին իր դարի այդ երախտավորներից է և Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներին և նրանց գործունեությանը տված նրա բանաստեղծական գնահատականը՝ «Թէպէտ սերմանողքն անկան, սերմանեալքն յոյժ արդիւնացան» (էջ 62), հավասարապես կարելի է համարել և իր՝ Մոկացու ինքնաբերական գիրքը։

Հաջողված են Գոլուխանյանի բանասիրական քննությունները, որոնք տարբեր հարցերի լուսաբանմամբ պայմանավորված, տեղ են գտել

զրրի «Ներածություն» և «Բանասիրական դիտողություններ» բաժիններում։ Գոլուխանյանի տեսադաշտից դուրս չեն մնացել բիշ թե շատ կարևոր գրագիր կամ տպագիր ոչ մի աղբյուր, ոչ մի փաստ, որոնք առնչվում են Մոկացու կյանքին ու անձին և նրա գործերի ներկայացման պատկանելության որոշմանը։ Զեռագրական նոր փաստերի հայտնաբերմամբ և ցարդ հայտնի տվյալների համադրմամբ նա ճշտում է Մոկացու ծննդյան մոտավոր թվականը՝ 1575, մահվան ստույգ տարին՝ 1625, իմ անապատի հիմնադրման ժամանակը՝ 1621 թ. և այլն։ Հարգանքի պատշաճը մատուցելով ն. Սովականին և ն. Ակինյանին՝ Մոկացու գրական ժառանգության հայտնաբերման ու ճշգրտման ասպարեզում կատարած աշխատանքների համար, Գոլուխանյանը ցույց է տալիս նրանց առանձին վրիպումները, ներկայացնելով Մոկացու գործերի լրիվ ցանկը՝ լրացված Անդրեաս Երեցին նվիրված Մոկացու «Հատուկ անմահական» սկզբնատողով գանձի իր հայտնաբերած «Նորագույն» մանկունք եկեղեցույ» տաղով։

Ներսես Մոկացու գրական գործունեությունը գուցադիպեց հայ գրականության զարգացման այն փուլին, որը, ըստ Աբեղյանի պարբերացման, կոչվում է նորոգման շրջանի գրականություն և շարունակվում է մինչև XIX դարի սկիզբը։ Գոլուխանյանը գտնում է, որ հայ գրականությունը այս փուլում զարգանում էր հիմնականում երկու ուղղությամբ, որոնցից «մեկն աչքի էր ընկնում հին ավանդների հետևողական պահպանումով, իսկ մյուսը՝ գրական նոր թեմաների ու ձևերի որոնումով» (էջ 10)։ Մոկացուն նա դասում է՝ և իրավացի՝ առաջին ուղղության գրողների շարքը։ Դա ներդաշն էր բանաստեղծի կրթա-լուսավորական և կրոնա-անապատական կյանքին ու գործունեությանը Հայրենիք, եկեղեցի, լուսավորություն, — ահա այն խնդիրները, որոնք պայմանավորել են նրա թե՛ գործունեության նպատակը և թե՛ ստեղծագործության բովանդակությունը։

Գոլուխանյանը, սակայն, պատշաճ խորությամբ չի անդրադառնում գրականության զարգացման ներքին հակասությանը։ Զարգացման այդ ուղղություններից յուրաքանչյուրն ունեւ

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1970, էջ 511։

իր առաջադիմական և պահպանողական թևերը՝ թե՛ զեղարվեստական մտածողության և թե՛ աշխարհայացքային առումով: «Արդարև, այդ վանական և անապատային կյանքի հետ անխուսափելի կերպով նորոգվում են նաև ճգնաժամային ու խստակրոն կյանքը, նոր ուժ են ստանում հին անպիտք հասկացողություններն ու աշխարհայացքը»² — Աբեղյանի այս դրույթը սկզբունքային նշանակություն ունի և տալիս է դարի գրականության զարգացման ներքին հակասության ըմբռնման բանալին: Ստեղծագործական և աշխարհայացքային այս հակասությունը բնութագրական էր և իրեն՝ Մոկացուն: Բավական է ասել, որ նա չի գրել սիրո ոչ մի տաղ. բնության ոչ մի երգ:

Մոկացու ստեղծագործությունը, որոշ պայմանականությամբ, Դոլուխանյանը բաժանում է երեք խմբի՝ պատմական թեմայով հորինվածներ, հոգու և մարմնի հակամարտությանը նվիրված և ավանդական-առասպելական բովանդակությամբ գործեր: Այս գործերի գրական ու գեղարվեստական արժեքների դնահատությունը Դոլուխանյանը տալիս է մի կողմից՝ կենսական այն ազդակների ու ժամանակի պահանջի, մյուս կողմից՝ դրական այն ազդեցությունների բացահայտմամբ, որոնք տեղ են գտել Մոկացու այս կամ այն երկի մտահղացման ու զեղարվեստական մարմնավորման մեջ՝ առանձին-առանձին: Այսպես, օրինակ, Մոկացու «Ներբողեան գովեստի շորեցունց արանցն, որը եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր» գործը դիտելով որպես XVII դարի կրթական-լուսավորական կյանքի վերանորոգման առաջին արտահայտություններից մեկը, ուր դրվադաված է հայրենասիրությունը, շինարարական աշխատանքն ու լուսավորությունը, նա «Ակունքներ և ազդեցություններ» հատվածում վերստին անդրադառնում է ներբողին, ցույց տալով այն ազդեցությունները, որ կրել է Մոկացին իր նախորդներից և, առաջին հերթին, հոգևոր ու նարեկացու: Եթե «Ներբողեան...»-ը ժամանակի իրականության արտահայտությունն էր և այսօր էլ այն պահպանել է պատմական սկզբնաղբյուրի իր արժեքը, ապա «Ողբ վասն առմանն Երուսաղեմի» պոեմը, որը նվիրված է Սալահ-ադ-դինի կողմից 1187 թ. Երուսաղեմի գրավմանը, հետաքրքիր է ժամանակի բաղադրական տրամադրությունների և ազատասիրական բաղձանքների դրսևորման տեսանկյունից: Մոկացին ստեղծագործությանն իրեն էր դարձնում պատմական անցյալի մի նշանավոր իրադարձություն

իր ժամանակակիցների մեջ վերստին արժարժեքի ազատագրության հույսը: Չնայած ակներև այն նմանությանը, որ կա Մոկացու «Ողբի» և նույն նյութին նվիրված Գրիգոր Տղայի «Ողբի» միջև, Մոկացու ստեղծագործությունը, սակայն, աչքի է ընկնում իր գաղափարական նոր երանդների հարստությամբ: Նա, ինչպես գրում է Դոլուխանյանը, «մտահոգված էր ոչ միայն իր հայրենակիցների վիճակով, այլև ընդհանրապես անհանգստացած էր բոլոր այն ժողովուրդների ճակատագրի համար, որոնք տառապում էին մահմեդականների լծի տակ» (էջ 19): Մոկացին ավելի սթափ է նայում Երուսաղեմի անկման պատճառներին, այն բացատրելով քրիստոնյա իշխանների անմիաբանությամբ:

«Վիճաբանություն երկնի և երկրի» տաղը, որը հոգու և մարմնի հակամարտության լավագույն դրսևորումներից մեկն է առհասարակ, Դոլուխանյանը արժեքավորել է համակողմանի առանձնապես ընդգծելով միջնադարյան քնարերգության աշխարհականացման պրոցեսում նրա ունեցած սահմանադժային նշանակությունը: «Դա կարծես այլաբանական ընդհանրացումն է մինչ այդ հզած բոլոր նման վիճաբանությունների,— գրում է նա,— իր ժամանակի առաջնայնացի ցայտուն արտահայտությունը՝ զեղարվեստական խոսքի ու մտածողության բնագավառում՝ աշխարհայացքային առումով» (էջ 21): Եվ բնական է, որ նա համակարծիք է Աբեղյանի դնահատականին. «Մեր քնարերգությունը, այսպես, երկնքից կատարելապես իջել է արդեն երկիրը, իրական աշխարհը» (էջ 23):

Ասենք նաև, որ Դոլուխանյանին շատ է մտահոգել այդ տաղի հեղինակային պատկանելության ճշգրտման հարցը: Իսկապե՞ս այն պատկանում է Ներսես Մոկացուն, թե ժողովրդական երգ է: Անվերապահելի է, որ տաղը ենթարկվել է գրական մշակման: Կուղեխնը Դոլուխանյանի փաստարկներին ավելացնելով մի փաստարկ ևս՝ հօգուտ Մոկացու: Այդ տաղը նկատելի աղերսներ ունի միջնադարյան տաղերգության և, մասնավորապես, Կոստանդին Երզնկացու «Բան դարնան օրինակալ խորհուրդի Քրիստոս. մի մարմին հասկանալը դեանս, ալ հոգևոր» տաղի հետ, ուր արդեն կա «երկիրս է մայր աննմանի, զինչ զեղեցիկ իրր ծնանի» շրջադարձային գաղափարը, իսկ վերնագրի մեջ՝ ալլարանությունը շրջափոխելու հնարավորությունը: Հետևաբար, բանաստեղծությունը կարող էր ունենալ գրական ակունք և ժողովրդականանալ և ոչ թե անսխալման բանահյուսական ծագում ունենալ և ենթարկվել գրական մշակման:

Դոլուխանյանի ուսումնասիրությունն ունի և այլ արժանիքներ: Ուշադրավ են, օրինակ, Մո-

² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. I, Երևան, 1946, էջ 439:

կացու արվեստի, լեզվի ու տաղաչափության, գրական ժանրերի լուսարանման հարցերը, բնագրաբանական գիտությունները և այլն: Իրերը, սակայն, դերժ չէ թերություններից:

1. Նյութի բաշխումը, հետևաբար և գրքի կառուցվածքը, մեղ թվում է անհամաչափ: «Իրեն ունի առաջաբան (էջ 5—7), «Ներածություն» (8—33), «Բնագրեր» (37—142), «Հավելվածներ» (145—158), «Մանրագրություններ և բանասիրական գիտություններ» (161—189), «Իրացում» (190—200), «Ներածություն» վերնագիրը, թվում է, չի համապատասխանում նյութի բովանդակությանը: Ավելի նպատակահարմար է թվում «Ներսես Մոկացու կյանքը և գործը» կամ համանման մի այլ վերնագիր: «Բանասիրական գիտություններ» (էջ 178—179) բաժինը, որը ուսումնասիրության օրգանական մասն է կազմում, պետք է անմիջապես հաջորդեր ուսումնասիրությանը՝ ամբողջացնելու համար ընթերցողի պատկերացումը Մոկացու մասին:

2. Ճիշտ է, որ «Ներսես Մոկացու նախասիրած տաղաչափական բոլոր ձևերն էլ ազգային ավանդական ծագում ունեն» (էջ 29) և գրանցից մեկն էլ «հայրենի կարգաւ» չափն է՝ 15 վանկանի երկու հատածով (2—3—2/3—2—3) մի չափ, որը շատ սիրված ու տարածված է եղել միջնադարում: Տեսական այս ճիշտ միտքը, սակայն, չի կիրառվել գործնականում: Մոկացու այս չափով գրված գործերը (ըստ սկզբնատողերի՝ ա. Երկինքն ու գետինքն եղբարբ, աճափ ո՞ր քան գո՞րն աւելի, բ. Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ՝ նորոգողն ազգի մարդկան, գ. Մանուկ մտավարժ էի և հոգոյ բարոյ դիպեցայ), ցավոք, հրատարակված են մեկ տողի փոխարեն երկու տողով, որ նախ՝ սխալ է գիտականորեն և ապա՝ տողաքանակը կրկնապատկում է անհարկի:

3. Նշելով, որ Մոկացու ստեղծագործության մեջ հատուկ տեղ են գրավում իրական կյանքից առնված համապատասխան պատկերները, Դոլուխանյանը շինականի աշխատանքային առօրյայից սերած մտածողության արտահայտություն է տեսնում նաև Մոկացու հետևյալ տողերում.

Ե՛կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,

Ահա այդիս մեր ծաղկեցեալ,

Յատանելոյ ժամն է մերձեալ,

Ձայն տատուկի աստ հնչեցեալ (էջ 32):

Իրականում սա ուղղակի նմանողություն է, և Մոկացու գրական ակունքը Աստվածաշունչն է, «Երգ երգոցը»:

4. Դոլուխանյանը իր գրքում վերահրատարակել է

կել է «Վիսաբանութիւն երկնի և երկրի» այն բնագիրը, որը կազմել և հրատարակել է Աստացականյանը իր «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուում: Չնայած ձեռագրական հիմքերի նույնությանը, կարծում ենք, սակայն, որ Դոլուխանյանը պիտի տար իր կազմած քննական-համեմատական բնագիրը: Դա բխում է ոչ միայն տաղի հեղինակային պատկանելության վերաբերյալ նրանց իրարամերձ կարծիքներից, այլև տարբերակների նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Մնացականյանը տաղը համարում է «հայկական միջնադարյան ժողովրդական լավագույն երգերից մեկը»⁴ և այս համոզմունքով էլ կազմել է բնագիրը, երբեմն տողատակ տանելով առանձին տողեր ու տարբերակներ, որոնք գրական մշակման արդյունք են: Այնուհետև, տաղերինչպես ասացինք, գրված է հայրենի չափով, իսկ Մնացականյանը մեկ տողի երկու հատածները դիտել է որպես առանձին տողեր: Բացի այդ՝ միշտ չէ, որ հետևել է տաղաչափության կանոնավորությանը և, վերջապես, կան բնագրական վրիպումներ: Նա նախընտրել է համարել 6-րդ (տպ. 11—12) տողի հետևյալ ընթերցվածը.

Վեցհազարագուն ծաղկունքն՝

Ամէնն իմ կողէն կու լինի (էջ 38):

Վեցհազարագուն տարբերակները գրչական շփոթության հետևանք է և նախընտրելի էր զհազարագոյն (ձեռ. № 9271) կամ զհազարագուն ճիշտ տարբերակները: Եվ ահա թե ինչու: Նախ՝ այս տողը իր քերականական կառուցվածքով նույնական է 4-րդ (տպ. 7—8) տողին.

Ձայնածառագուն աստղունքն՝

Ամէնն իմ կողէն կու լինի:

Սա ասում է երկինքը և ի պատասխան լսում.

Ձհազարագուն ծաղկունքն՝

Ամէնն իմ կողէն կու լինի:

(Տպագրված է կու լինի, նախընտրելի է կու լինի, ինչպես պահանջում է հանգավորումը: Տաղը գրված է ի հանգով):

Մնացականյանի օգտագործած վեց աղբյուրներից մեկը (ձեռ. № 3081) թերի է և չունի այս տողը: Մեկ ձեռագիր (№ 9271, էջ 125ա) ունի զհազարագոյն փոխանակ վեցհազարագուն: Երեք աղբյուր՝ մեկ ձեռագիր (№ 2394, էջ 31բ և էջ 52ա) և մեկ տպագիր («Բաղմավէպ», 1847, էջ 332) ունեն վեցհազարագուն: Մնում է մեկ աղբյուր՝ ձեռ. № 7709, որի տարբերակները Մնացականյանը նույնացրել է վեցհազարագուն

⁴ Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 617.

3 «Երգ երգոց», գլ. Բ, 10—13.

ձեին, ընդունել է այդ տարրնթերցվածը: Ճիշտ է, ձեռագիրն ունի վնասված տեղեր, բայց բառն ընթերցելի է՝ Գ. ռ. ազուն (ձեռ. № 7709, էջ 99ա): Հստ ժամանակագրության՝ օգտագործված ձեռագրերից սա հնագույնն է՝ 1608 թ.: Սակայն եթե իրականում սա ամենահին ընդօրինակությունն էլ չլիներ, դժվար չէ նկատել, որ բոլոր գրության այս ձևից է ծագել հետագա գրիչների շփոթությունը, բացառությամբ մեկի (ձեռ. № 9271): Նրանք Գ. ռ. ազուն բառը կարդացել են Գ նախդիրը համարելով թվատառ՝ վեց. որ սխալ է, ու տառը՝ հազար. որ ճիշտ է: Քննական-համեմատական նոր բնագիրը կարող էր սրբագրել այս սխալը:

Գեղարվեստական ճաշակի հարց է, իհարկե, թե որ ձևն է նախընտրելի՝ աստղո՞ւնքս, թե՞ աստղունքն. ծաղկո՞ւնքս, թե՞ ծաղկունքն, իմ

կողէ՞ս, թե՞ իմ կողէն և այլն, բայց բնագրի ճիշտ վերծանման ու վերականգնման ոչ բնավ երկրորդական հարց է՝ վեցհազարագո՞ւն, թե՞ զհազարագուն ընթերցվածը:

Այս թերությունները, անշուշտ, մասնակի բնույթ ունեն: Ա. Դուրխանյանի «Ներսես Մոկացի» գիրքը հարստացնում է միջնադարյան այդ գրականության ուսումնասիրությունը մինոր և ուշագրավ ուսումնասիրությամբ՝ առաջին անգամ ամբողջացնելով բանաստեղծի գրական դիմանկարը և հրապարակի վրա դնելով նրա ստեղծագործությունների քննական-համեմատական բնագրերը՝ պատրաստված սիրով ու բարեխղճորեն:

Ա. ՂԱԶԻՆՅԱՆ

Nicholas I Patriarch of Constantinople. Letters. Greek Text and English Translation by R. J. H. Jenkins and L. G. Westerink, „Dumbarton Oaks Texts“, II, Washington, 1973, XXXIX+631 стр.

Послания константинопольского патриарха Николая I, греческий текст и английский перевод Р. Дж. Х. Дженкинза и Л. Дж. Вестеринка. «Dumbarton Oaks Texts», II, Вашингтон, 1973, XXXIX+631 стр.

Письма Николая Мистика, патриарха константинопольского (901—907, 912—925) были доступны до сих пор по изданию А. Май (перепечатано в «Патрологии» Миня)¹, основанному на позднем Ватиканском списке (Vatic. gr. 1780, XVI в.). В настоящем издании использована Патмосская рукопись (Patmos. 178, X—XI вв.), сохранившая основную часть эпистолярного наследия Николая (послания № 1—163; на самом деле их более 163, так как издатели выделяют 47 I и 47 II, 95A, 101A, 157A, — всего, следовательно, 167 номеров), а также Венская (Vindob. phil. 342, XII в.), содержащая небольшое количество писем — в другой последовательности и часто с существенными разночтениями; особенно важно наличие полного текста письма № 47 II, испорченного в Патмосском манускрипте. Патмосская и Венская рукописи лишь эпизодически привлекались (главным образом Р. Дженкинзом) для восстановления текста посланий Николая (№ 32,

40, 47, 49, 114). Помимо этого, ряд писем патриарха включен в другой Патмосский эпистолярный сборник (Patmos. 706, XII в.), семь из них содержатся также в Patmos. 178; кроме того, 21 послание, приписанное в сборнике маистру Симеону, логофету дрома, атрибутировано издателями Николаю Мистике (№ 164—183)². Наконец, небольшая группа писем (№ 184—190) публикуется по рукописи библиотеки св. Ангела в Риме — Angelicus 13 (XI в.); ранее они были известны только по старому изданию XVIII в.³

² Изданы впервые: J. Darrouzès *Epistoliers byzantins du X^e siècle*, Paris, 1960, стр. 99—163. Даррузес считал возможным видеть в Николае автора еще семи посланий (шести, впрочем, под вопросом) — издатель рецензируемой книги Л. Вестеринк отводит его атрибуцию, хотя и признает, что эти семь посланий вышли не из-под пера Симеона (стр. XXXIII и сл.).

³ P. Lazari, *Miscellaeorum ex manuscriptis libris bibliothecae Collegii Romani Societatis Iesu*, vol. II, Roma, 1757, стр. 59—553.

¹ A. Mai, *Spicilegium Romanum*, X, 2, Roma, 1841, стр. 161—410; J. P. Migne, *Patrologia graeca*, t. 111, Paris, 1863, стр. 27—392.